

ԳՆԻՐԱՅԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԵՐԱՅԱԿԱՆ ՆԱԽԵԴԱՍՈՒԹՅԱՆ

ՓՈԽՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՐԱՐՈՒՄ

ԷԴՈՒՐԳ ԾԿՐՏՅԱՆ

Գրաբարի քերականագիտության մեջ դերբայների ձևաբանական և շարահյուսական հատկությունները բավականաչափ հետազոտված են¹, սակայն փերբայական կապակցության և դերբայական նախադասության փոխհարաբերության հարցը առ այսօր ըստ ամենայնի ուշադրության չի արժանացել։ Սույն ուսումնասիրությանը ներկայացվում են միայն դերբայական կապակցությունների կառուցվածքային արտահայտության արտաքին կողմն ու գործառական նեղ ոլորտը՝ նպատակ չունենալով բացահայտել դրանց ոճական բոլոր առանձնահատկությունները, գործառական բազմազանությունները և հետագայում կրած փոփոխությունները։

Գրաբարի շորս դերբայներից երկուսը՝ անորոշը և անցյալը, այս հետազոտության համար կարևոր դեր ունեն և մեծ հետաքրքրություն են ներկայացնում, իսկ մյուս երկուսը՝ ապառնին և ենթակայականը՝ ոչ։ Հետևապես այսուհետև գործածվող «դերբայական կապակցություն» արտահայտությունը վերաբերում է անորոշ և անցյալ դերբայներով կազմված կապակցություններին։ Այսպիսի կապակցությունների տարածված սովորական գործածությունը այն կամ այն շարահյուսական անդամի դերով հանդես գալն է։ Օրինակ՝ «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ, Եւ հանել զօսկէօլ շիկափոկ պարանն, եւ անցելաւ որպէս զարծուի սրաքն ընդ գետն, եւ ձգեալ զօսկէօլ շիկափոկ սլաւանն»² ընկէց ի մէջք օրորողին Ալանայ» (Խ., 179), «Ապա երէց որդին Գրիգորիս եհաւ լեպիսկոպոստութիւն կողմանց Աղուանից և Էրաց... զգիտութիւն աստուծոյ յանձին կրելով» (Բ., 10)։ Ընդգծված դերբայական կապակցություններն անցյալ և անորոշ դերբայներով կազմված դարձվածներ են, որոնք ձևի պարագայի պաշտոն են կատարում։

Մի քանի օրինակ՝ նախադասության անդամի այլ պաշտոններով՝ «Եւ զայս ամենայն լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշտակէն մխիթարութեամբ մեծաւ գոհանայր զսեռանէ աստուծոյ» (Բ., 12)։ Հիմունքի պարագա՝ «Ժամանակի՝ երանգով։ «Յանցանելէ մռկի եղծանի ամպարիշտն, իսկ աբղարսյն խոյս տուեալ՝ կեցցէ յաւիտեան» (Առակ., Ժ, 25)։ առաջինը ժամանակի պարագա է, երկրորդը՝ ժամանակի երանգով ձևի պարագա։ «Սա խրոխտացեալ ամբարձ գձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տաճածանել ազգի մաղղկան ընդ լայնութիւն ամենայն երկրի» (Խ., 32)։ Ժամանակի պարագա է։ «Ոչ ինչ ածէր ընդ միտ զսէր թագաւորին կամ ի նմանէ կուէ զպատուեալն» (Բ., 11)։ ուղիղ խնդիր է։ «Յառաջ քան զվատուցանել զպատարագն համբառնայր զձեռն երէցն ի վերայ սեղանոյն, և ասէր» (Բ., 188), «Որ նախ քան զգն երթալն ի դուռն և սպաս մի քո մեծ ծանուցանի արարուածք առաջի թագաւորին» (Համ., Է, 6 (1), 471, 671), «Եւ իբրեւ ել հրաման յարբունուստ աքսորել զմեծն Ներսէս, որպէս զմի անգամ խաբող և զգժող արեւայի, մատուցեալ ոմանց առ նա...» (Խ., 299)։ նախադրության խնդիրներ են, որոնք նախադրությունների հետ տարբեր պաշտոններ են կատարում։ «Ի զուր է ասելն Մաւկիոնի (Եզն., 184)։ ենթակա է։

1 Գրաբարի դերբայական կապակցությունները համեմատաբար ծախսվում են ուսումնական և ենթարկված Վ. Ա. Բոսյանի «Գրաբարի բառակապակցությունները» (Երևան, 1980) աշխատության մեջ, իսկ դերբայների ձևաբանական և շարահյուսական կիրառություններն մասամբ անդադարձել ենք առանձին հոդվածով (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 1)։

«Տեսանեմք երկուս արս միազգիս ընդ միմեանս զբզոնալ» (Ծղն., 14). որոշիչ է: «Եւ զի մի էութիւն մշտնջենաւորական է և պատճառ ամենեցուն լինելոյ» (Ծղն., 10). հատկացուցիչ է: «Եւ մինչդեռ նա յայնմ դորժ գմայրեօքն տնկելովք էր, յանկարծակի գուշակ հասանէր առ խոսորով» (Բ., 17). կոնկրետացնող բացահայտիչ է:

Հաճախադեպ և գրարարին բնորոշ երևույթ է անորոշ դերբայով կազմված կապակցությունն ինքնակապակցության նպատակի պարագայի պաշտոնով հանդես գալը: Օրինակ՝ «Եւ արձակեաց քարոզս և կոչնականս և հրաւիրակս՝ ի փրկութեան լոյսն հրաւիրել զԲեզ» (Բ., 34), «Եւ արկին զնա ի պահ, դառել զնա հրամանաւ, Տեառն» (Ղեւտ., ԻԴ, 12), «Եւ արձակեաց զաղաւնին զհետ նորա տեսանել թէ ցածուքեալ իցէ ջուրն յերեսաց երկրէ» (Մնն., Ը, 8): Այսպիսի կապակցությունների բնորոշ կողմն այն է, որ նպատակի իմաստն արտահայտվում է հենց անորոշ դերբայի միջոցով: Այլ դեպքերում նպատակի իմաստը կարող է արտահայտվել նախդրավոր կամ նախադրության մեջ կառուցվածքով, որոնց մեջ անորոշը կամ զուրկ է նպատակի ինքնուրույն իմաստ արտահայտելու հատկանշից, կամ հանդես է գալիս այդ հատկանշի նվազ իմաստով: Օրինակ՝ «Մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սառակել» առ ի խնդրելոյ զվրեժ անաբանաց հասարակաց արարչին» (Ծղն., 13), «Ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայն ձախաղողմանն, որք կապեալ էին ի կռակաշարժութեան անլուծանելի հանդուցիւր, վառեալք և ջեռեալք իբրև զհնոց առ այլն զովստ սուրբ եկեղեցւոյ» (Ե., 8), «Ապա արձակէր զիշխանսն պատուականս ի հնազանդութիւն խաղաղութեան վասն գերեղաւած առնել ի կայսերէն միւս անգամ» (Բ., 49), «Վասն առաւել սիրելոյ զԱստուած ի բարւոյց արարածոց հրաժարեն» (Համ., Գ. 1, 526):

Հաճախ նույն նախադասության մեջ դերբայական կապակցությունները հաջորդում են միմյանց՝ վարելով տարբեր պաշտոններ: Օրինակ՝ «Արդ որք ղնոյն սովորութիւն մինչև ցայնժամ ևս ունէին գաղաւնի, ի մի միաբանութիւն ժողովեալք՝ հասանէին իբրև հազարք երկու, խորհուրդ եղեալ ընդ միմեանս՝ ստանանել զհաճեալապետն աստուծոյ զՎրթանէս» (Բ., 7), «Եւ ընդ ծագել արգականն զգուճել յերիս մասունս բաժանեալ ի բանակն արկանէին» (Ե., 66), «Ուրում ոչ հաւանեալ՝ արարեցաւ և ի նաւալիւն լինել ըստ խտաշարունջ օղոյ նմեռանոյն, բնկեցեալ ի կղզի ինչ անապատ՝ շարդեաց զնաւն. և նաւորդացն ոչ իշխեցեալ մակուկաւն նաւել, մնային տագնապեալ, ուտելով զարմատ անտառին» (Խ., 299):

Դերբայական կապակցությունն ունեցող նախադասության կամ առանձին գործածվող դերբայական կապակցության մեջ գլխավոր անդամների արտահայտության և փոխհարաբերության հարցերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարում դերբայական կապակցությունները դրսևորում են շարահյուսական-կիրառական և ոճական մի շարք առանձնահատկություններ: Դերբայական բոլոր կապակցությունները այս տեսակետից բաժանում են երեք խմբի՝ կախյալ, կիսանկախ և անկախ:

Կախյալ կոչվող կապակցությունների բնորոշ կողմն այն է, որ դրանք առանձին նախադասության արժեք չունեն, այլ, մտնելով նախադասության կազմի մեջ, շարահյուսական անդամի դեր են կատարում կախյալ հարաբերության մեջ. դառնում են լրացում, ենթակա, լինում են վերադիր, նախդրի կամ նախադրության խնդիր: Այդպիսի բնույթ ունեն վերը բերված օրինակները՝ որոշ բացառություններով: Ահա ևս մի քանի օրինակ՝ «Եթէ ի մահուանն Արտաշէսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտաշէսը՝ ասելով ցեայրն» (Խ., 194), «Այլ նա աստիկ իբրև զկառս իմն լծեալ ի չորից երկվարաց զաշխարհս տեսանեմք» (Ծղն., 13), «Եկն ուսուցանել և խրատել զնա» (Բ., 21), «Եւ կուրացեալ ի նշմարիտ յայտնութենէն՝ ոչ ինչ իմացաւ զպատրանս խաբեութեան» (Ե., 50): Յուրաքանչյուր նախադասություն ունի իր ենթական ու ստորոգյալը (դժուարի Արտաշէսը. նա եկն. նա ոչ իմացաւ), և ընդգծված կապակցությունները, որոնք իրենց ներսում գլխավոր անդամների փոխհարաբերություն չունեն, կախյալ հարաբերության մեջ են. լրացում են

(սպարազա, որոշիչ): Կապակցությունները շարահյուսական ներքին վերլուծության ենթարկելիս նկատելի է, որ դերբայական ձևերը «պայմանական ստորոգյալի» դերով փոխկապակցության մեջ են մտնում դարձվածի կազմից դուրս գտնվող որևէ անդամի հետ (Արտալազդն դժուարի և ասէ. իբրև զկառս, որ լծեալ է. նա եկն, զի խրատիցէ. նա ոչ իմացաւ, քանզի կուտացեալ էր): Այլ կերպ ասած՝ եթե նկատի ունենանք Քլխավոր անդամների առկայությունը, ապա դրանք կդիտվեն իբրև «միակազմ» կապակցություններ, իհարկե, ենթակայի բացակայությամբ: Այս տեսակետից քննելով հարցը՝ կարող ենք ցույց տալ նաև մյուս կապակցությունների առանձնահատուկ կողմերը:

Կիսանկախ դերբայական կապակցությունների առանցքում լինում են առորոշ կամ անցյալ դերբայը, որն ունենում է իր ենթական՝ բուն կամ կողմնակի, և մի զուգընթաց ենթակա-ստորոգելիական հարաբերություն: Սա դրսևորվում է երեք ձևով.

ա) Դերբայ-ստորոգյալն ունենում է իր բուն ենթական, որը զուգահեռաբար, «դիմաւոր բայի փոխանակ ինքնին վարող»² դերբայից բացի, ունենում է նաև դիմավոր բայ-ստորոգյալ: Օրինակ՝ «Իսկ զայս ամենայն հրաման պատուիրանաց առեալ մագաց և մոզպետաց, զտիւ և զգիշեր փութային հասանել յաշխարհն Հայոց» (Ե., 53). մագաց և մոզպետաց սեռականով բուն ենթականերն ունեն առեալ անդամ և փութային հասանել դիմավոր ստորոգյալները: Այդպես էլ՝ «Բայց սրբոյն Գրիգորի ի Մանեայ այրն կեցեալ աներևութաբար ամս բազումս, փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց» (Խ., 250), «Եւ չգտեալ աղանուղն հանգիստ ոտից իւրոց՝ դարձաւ անդրէն առ նա ի տապան անդր» (Մեն., Ը, 9), «Զայն լուեալ Մանեայ դիւի՝ վաղվաղակի առ Որմիզդ հասանէր» (Նդն., 96), Ննթղի կարող է կապակցությունից դուրս լինել՝ «Ապա քաղաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի Բաղէիցն, տաճիկ ուլտաք արձակէ ի Հայս արս» (Բ., 141). Բանգի շաղկապը կապակցությունը դարձնում է կիսանկախ, և նախադասության այսպիսի կառուցվածքը տարբերվում է «Ապա քաղաւորն Պարսից, զայս լուեալ ի Բաղէիցն, արձակէ արս» կառուցվածքից, որտեղ կապակցությունը կախյալ է:

բ) Կապակցության ենթական կարող է լինել կողմնակի: Սա նշանակում է, որ նույն նախադասության մեջ դերբայ-ստորոգյալին ու նրա կողմնակի ենթականից զուգընթաց կա դիմավոր ստորոգյալ և ենթակա: Օրինակ՝ «Սա խորխաւացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խուլաց և ուժաւորաց» (Խ., 32). ազգի կողմնակի ենթակա է ի տարածանել անորոշի նախդրավոր ձևի համար, իսկ սրանց զուգահեռ կան սա (Հայկ) ամբարձ գլխավոր անդամները: Այդպես էլ՝ «Եւ ահա ընդ ասելոյ քաղաքումն եղև հոգւոյս իմոյ» (Ե., 154), «Յանցանել մրերի եղծանի ամբարիշտն» (Առակ., Ժ, 25):

գ) Բուն և կողմնակի ենթակաները կարող են հանդես գալ կողք-կողքի՝ իրենց համապատասխան ստորոգյալներով: Օրինակ՝ «Եւ իմացեալ իմ զմերձ լինելն ետրա ի տուն իմ, փախեալ, և գամ աւասիկ տազնապաւ» (Խ., 34). իմ բուն ենթական ունի իմացեալ, փախեալ, գամ ստորոգյալները, իսկ ետրա կողմնակի ենթական՝ զմերձ լինելն «պայմանական ստորոգյալը»: «Ընդ ծագել արեգական, օդոյն զխոնավութիւն ջուրց առեալ՝ զճառագայթիւք արեւու արկանէ » (Նդն., 129). օդոյն բուն ենթական ունի առեալ, արկանէ ստորոգյալները, իսկ արեգական կողմնակի ենթական՝ (ընդ) ծագել «պայմանական ստորոգյալը»: Հատկանշական է, որ սրանց բուն ենթակաները նախորդ կետում նշված բուն ենթականերից տարբերվում են հոլովով. սրանք թեք հոլովով են (հմմտ. սա ամբարձ. ազգումն եղև. և՛ իմացեալ իմ, փախեալ, գամ. օդոյն առեալ՝ արկանէ):

2 Ա. Բ ա գ ր ա տ ու չ ի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարդացելոց, Վենետիկ, 1852, էջ 199:

րաք» (Խ., 119). առաջինն անկախ է, երկրորդը՝ կիսանկախ: Ռեալց Արտաշիսի նուանեալ զգամաֆս միջոցազ ծովուցն երկոցունց, ընու զՈվկիանոս բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արեմմաս» (Խ., 118). առաջինը կիսանկախ է, երկրորդը՝ կախյալ:

Դերբայական կապակցութիւնները հեղինակային ոճի դրսևորման լավագույն միջոցներից են: Այսպես՝ «Իսկ երանելին նունն ել գնաց աշակերտել զայլ ևս զաւառոսն Վազ յաճապակ լեզուէն, շրշելով անպաճառաբար և առանց անբողաց. օտարացեալ յաշխարհէ և որ ի սմա. կամ թէ ճշմարտագոյն ասել՝ ի խաշ ելեալ, ի կրթութիւն մահու գկեանսն առնելով, բանիւ վկայ բանին Աստուծոյ, և յօժարութեամբ իրով» [որպէս] արեամբ պսակեալ» (Խ., 238—239), «Եւ ոչ միայն այնչափ, այլ և զօրութիւն զգեցոյց նոցա՝ կոխել զգօս տեառնն իւրեանց, և արկ սուր և բաժինս ի տան նորա, և վառեաց հուր յարարածս նորա. մինչև կարնել և խափանել զօրէնս նորա յաւուրցն Յովաննու Մկրտչի, և անտառանել զիւր արեալութիւնն, արծալեալ քառոսս քազումս՝ քառագել, և ճրնձողս քազումս՝ հնձել, զոր ոչ ինքն սերմանեաց» (Եզն., 185), «Ձի ոմն ընդունելի պատարագաւ՝ արդար կոչեցեալ. Եւ այլ ոմն հաճոյական արուեստիւ ի վերայ սմենակով մահուանն կենօք երեւալ, և միւս ոմն բովանդակ արգաւանթեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ աստուածապատիժ ծովուն հանդերձ ամենայն շնչականօք տարեւոր ժամանակօք նաւակաց պաճեալ. և միւսոյն հանկարծագիւտ հաւատովք արդարացեալ, աստուածամերձ աստուածախօս դաշնաւոր կատարեալ, և զաւետիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ» (Կ., 3):

Օրինակներից առաջինում անորոշ և անցյալ դերբայներով կապակցութիւնները հերթագայում են միմյանց, երկրորդում իշխող են անորոշ ձևերը, երրորդում միայն անցյալով կապակցութիւններ են. տվյալ դեպքում ոճական առանձնահատկութիւններ են դրսևորում դերբայական կապակցութիւնները կազմութեամբ ու բնույթով: Եթե հեղինակներից մեկը հաճախակի է գործածում այդ ձևերից մեկը, ապա չի բացառվում նաև նույն հեղինակի մոտ մյուս ձևերի գործածութիւնը: Այս երևույթն իսկ հեղինակային ոճերի մասին խորհելու տեղիք է տալիս: Լեզվի տվյալ շրջանին կամ որևէ հեղինակի բնորոշ ոճերն ունեն դրսևորման յուրահատկութիւններ ու նրբերանգներ, որոնք առանձին ուսումնասիրության նյութ են և այլ համակարգ են ներկայացնում: Դերբայական կապակցութիւններին առնչվող մի օրինակ: Եզնիկից բերված վերջին օրինակում մինչև շաղկապին հաջորդում են անկախ կապակցութիւնները, որոնք առանձին նախադասության արժեք ունեն: Ժամանակակից հայերենին աչրպիսի ոճը խորթ է: Նույն հեղինակի մոտ, մի այլ տեղ, նույն շաղկապին հաջորդում է դիմավոր նախադասութիւնը՝ «...պարտ է նմա թագաւորել, մինչև դիցին ամենայն թշնամիք նորա ի ներքոյ ոտից նորա» (Եզն., 188). սա նախորդի համեմատութեամբ այլ ոճ է, որն արդեն բնորոշ է նաև ժամանակակից հայերենին: Կամ, ինչպես Վ. Չալրիյանն է նկատում. «Երբեմն կը գտնուի նաև լոկ անցելով խօսք մը լռացեալ. մանաւանդ յորժամ, իբրև մակբայէն ետք. օր. Յորժամ հարաւ շնչեալ՝ ասէք թե խորշակ լինի. Զիարդ մանուկն ի հասակ ասեցեալ, ապա ի ծերութիւն դարձեալ: Գուցէ կարծիս ինչ տայցէ թագաւորին իբրև դաւով ինչ ի նմանէ զայրն վնասեալ»³, որտեղ մակբայներին հաջորդող կապակցութիւնները գրաբարաւոր կառուցներ են, որպիսիք աշխարհաբարին բնորոշ չեն: Ուրեմն ոճի ուսումնասիրութիւնն այլ բնագավառ է:

Այսպիսով, դերբայական կապակցութիւնների տարբեր տեսակները նախադասության հարաբերակցութիւնն պայմաններում տարբեր առանձնահատկութիւններ են դրսևորում: Կախյալ տիպի կապակցութիւնները, որոնք նախադասության անդամի դեր են կատարում, միայն փոխակերպութեամբ (դերբայը «պայմանական ստորոգյալի» վերածելու եղանակով) են հավասարադոր նախադասության, իսկ մյուսները (կիսանկախ, անկախ), ուղղակի ասած, ինք-

3 Վ. Չալրիյան, Քերականութիւն հայկազնեան լեզուի աշխատասիրեալ ի հ. Արսենէ Վ. Այտընեան, Վիեննա, 1885, էջ 430—431:

նորոշել նախադասության արժեք ունեն. նախադասություններ են: Հին հայերենում դերբայական կապակցությունները, կազմված անորոշ և անցյալ դերբայներով, գործառական լայն ոլորտ և ակտիվ տարածում ունեն. դա հասաատվում է գրաբարյան մատյանների ընձեռած տվյալներով և հեղինակային րազմահարուսա ոճերով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.—«Ազաթանգէղայ Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1909:

Բ.—«Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883:

Ե.—«Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957:

Եղն.—«Եղնրկայ վարդապետի Կողբացոյ եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:

Խ.—«Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1910:

Կ.—Կ ո ռ ի լ ի ն, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանի, Թիֆլիս, 1913:

Համ.—«Հայկական համարարան», 1, Երևան, 1972 և 6 (1), Երևան, 1975:

Ղևտ., Մնն., Առակ—Ս. Գրքի համառոտագրությունները հայագիտության մեջ ընդունված կարգով:

Փ.—«Ղազարայ փարպեցոյ Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1904:

ВЗАИМОСВЯЗЬ ПРИЧАСТНОГО ОБОРОТА И ПРИЧАСТНОГО ПРЕДЛОЖЕНИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЭДУАРД МКРТЧЯН

Резюме

В древнеармянском языке все причастные обороты условно делятся на 3 группы: *зависимые, полузависимые и независимые*.

Зависимые причастные обороты не являются отдельно значимым предложением, а входя в состав предложения, выполняют синтаксическую роль, имея зависимое отношение. В основе *полузависимых* причастных оборотов лежат или неопределенные причастия, или причастия прошедшего времени, которые имеют свое основное и косвенное подлежащее и, параллельно,—связь подлежащего со сказуемым. В *независимых* оборотах причастия настолько самостоятельны и независимы, что имеют свойства сказуемости и становятся равными глагольным сказуемым, вследствие чего такие обороты называются просто предложениями. В древнеармянском языке причастные обороты имеют широкую сферу применения и расцениваются как авторский стиль.